

Յաւելուած «ՄՈՒՐԱ» ամսագրի

# ԴԱՏԱՑՄԱՆՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԼԵԳԵՆԴԱ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՆՑԵԱԼԻՑ

5 ԱՐԱՐՈՒԱԺՈՎ

Խօն. Ա. ԱՌԵՄԲԵՏՅԱՆԻ



ԹԻՖԼԻՍ

Արագատիպ Ա. Քութաթելաձէի, Նիկ. № 21  
1904

---

Дозволено цензурою. Тифісь, 17 марта 1904 года

---

# ՀԵՂԻՆԱԿԻ ՅԱՌԱԶԱԲԱՆԸ

Որքան ինձ յայտնի է, Վրաստանի սարքն ու կենցաղը, ուր կատարում է պիեսիս գործողութիւնը, շատ սակաւ են երևան եկել ոռւսական բեմի վրայ և այն էլ շատ առաջ: Այդ հանգամանքն անհրաժեշտ է դարձնում իմ ներկայ բացատրութիւնը:

Իհարկէ, գեղարուեստական գլխաւոր դրդիչ պատճառը (առցուցեա), որ ինձ հարկադրեց պիեսիս նիւթ ընտրել Վրաստանի անցեալը, էր առանձին անհատների, ժողովրդական բարքերի այն ընդհանուր վառ երանդը և պատմական անցքերի գունաւորումն, որ յատուկ է հարաւին և որը մի առանձին թափով հանդէս է գալիս մանաւանդ պատմութեան լարուած մոմենտներին, երբ մի ժողովուրդ իր վերջին ճիզն է թափում ձեռքից շտալու այն, ինչ որ իր համար ամենայն արդարութեամբ ամենից թանգն է համարում—իր հաւատը և իր անկախութիւնը: Բացի դրանից, ինձ թուում էր, որ այս վերջին հարիւր տարւայ ընթացքում Վրաստանի ունեցած սերու կապը Ռուսաստանի պետական, հասարակական և հոգևոր կեանքի հետ, վրաց ժողովուրդը դարձնում է աւելի մօտ և հետաքրքրական ոուս հասարակութեան համար, քան ուրիշ շատ երկրոների ու ազգերի կեանքը, որը դրամատիկական երկերի նիւթ գարձած երևան է համառում ոռւսական բեմը:

Սակայն ինքնըստանքեան ևս Վրաստանն իր անցեալով աւելի է արժանի ուշադրութեան, քան այն, որ նա գրաւում է ոուսաց գրականութեան մէջ, արժանի է շնորհիւ այն բանի, որ նըրա ամբողջ պատմութիւնը միջառեալ և մինչև Ռուսաստանի հետ տեղի ունեցած ազատ ու բարեյօժար միացման գործողութիւնը ներկայացնում է մի փոքրիկ ազգի անընդհատ, լարուած մաքառումն իսլամի անսահման ոյժի դէմ յանուն բրիստոնէութեան կուլտուրական սկզբունքների: Դիտակցաբար թէ անգիտակցաբար, միայն թէ Վրաստանի ամբողջ ժողովուրդը՝ թագաւորից սկսած մինչև վերջին աղքատը՝ թէ արեան հեղեղների գնով, թէ առանձին անհատների կամ բովանդակ ազգի անթւելի սխրագործութիւնների շնորհիւ, կարողացել է 1200 տարւայ տարածութեան վրայ պահել-պահ-

պանել այս, ինչ որ չէ յաջողուած իր բոլոր մաքրութեամբ  
պահպանելու ուշից ազգերին, որոնք անհամեմատ աւելի բարե-  
յաջող պարագաների մէջ են եղած: Լայն կրօնական համբերա-  
տարութիւն և յարգանք դէպի օտար դաւանութիւնները, ա-  
ռանց սակայն կրօնական անտարբերութեան ամենափոքրիկ  
ցոյցի կամ նշանի—այդ բանը պէտք է վկայեն ամենքը, ովքեր  
առիթ են անցել խորը դիտելու մեր ժամանակի վրացիների  
յարաբերութիւնները, նրանց վերաբերմունքը դէպի հրէաները,  
աղանդաւորները և նոյնիսկ դէպի այն իսլամը, որը ընդամենը  
հարիւր հինգ տարի սրանից առաջ քար-քարի վրայ չժողեց  
թիֆլիսում և ջնջեց Վրաստանի բնակչութեան կէսը: Վրացի  
կնոջ անձնական ու ընտանեկան ազատութիւնը և նրա ահագին  
ազդեցութիւնը ոչ միայն ընտանեկան, այլև հասարակական  
կեանքում թէ վերին, թէ ստորին դասակարգերում՝ ներկայացը-  
նում են մի դժուար հաւատալի ու դժուար մեկնելի երեսիթ,  
ևթէ հակառելու լինես վրացունու այդ դիրքը ժամանակակից  
իսլամական կնոջ դերին և յիշես, որ Վրաստանը հազար տարի  
շարունակ տնքում էր այդ իսլամի ծանր գարշապարի տակ,  
որից հերոսական ճիգեր թափելով շատ սակաւ անգամ կարո-  
ղանում էր ազատուել, այն էլ ոչ երկարատև: Իւրաքանչիւրի  
անձնական, մարդկային արժանիքը՝ անկախ նրա սոցիալական  
դիրքից կամ հարստութիւնից, առանց տեղի տալու լկտիու-  
թեան կամ անսանձութեան, լիակատար յարգանք դէպի ինքը  
ու դէպի ուրիշը—այդ ամենը կազմում է վրաց ժողովրդի բը-  
նորոշ գիծը, մի գիծ, որը ջնջել չկարողացաւ իշխանութեան  
ոյժի կամ փողի առաջ խոսահուուղ այն ստրկական ոգին, որի  
մէջ ամփոփուած են իսլամական տէրութիւնների ամբողջ ի-  
մաստն ու էութիւնը: Վերջապէս, Վրաստանի թոյլ կուլտուրան  
կարողացաւ այնուամենայնիւ պաշտպանել ոչ միայն իր հաւատը,  
այլև իր ազգային ուրոյնացումը, իր տիպիկական ազգայնա-  
կանութիւնը, մինչդեռ հին պարսից առաւել գօրեղ կուլտուրան  
ոյժ չունեցաւ իսլամականութեան մէջ անաղարտ պահպանելու  
իր ազգային հազարամեայ բնագծերը:

Քրիստոնէական հումանիզմի, կնոջ ազատութեան, մարդ-  
կային արժանապատւութեան և ազգայնութեան համար Վրաս-  
տանի մղած այդ կուլտուրական կոիւը, կոիւն ևս առաւել ազ-  
նիւ նրանով, որ այդ սկզբունքներն ինարկէ, ոչ միշտ դաւան-  
ում էին գիտակցաբար, այլ նրանք թանգ ու մօտ էին և՛ ժո-  
ղովրդական մասսաներին, և՛ նրանց ղեկավարներին աւելի շու-  
տով բնազդաբար,—այդ կոիւն առաջ էր տարւում ոչ միշտ մի-  
ևնոյն ճանապարհով, մինոյն միջոցներով: Իսլամի ճնշումից

գտած ազատութեանն արագօրէն հետևում էր անողորմ և արիւ-  
նահեղ ստրկացման խիստ շղան: Իսլամը հարուածում էր որ-  
պէս շանթ ու կայծակ: Տղամարդիկ կոտորւում էին. իբրև գե-  
րիներ, վաճառքի էին հանւում: Հայրենիքի համար կուող մի  
բուռն անվեհեր քաջերի հերոսական ջանքերն անզօր էին մի  
քան անելու այն անթիւ-անհամար պարսիկ կամ տաճիկ, թա-  
թար կամ արար գորախմբերի ու հրոսակների քանակի դէմ,  
որ ներկայացնում էր իալամի ոյժը: Եւ այլադաւանների այդ  
սպանիչ լծի տակ գալիս, տիրում էր մեռելային համզիստ՝  
հետն էլ մի կրօն—մռայլ ու անհամբերատար, խիստ ծիսական,  
անջերմ, անսէր, աններողամիտ, լի արհամարհանքով դէպի  
կեանքի ուրախութիւններն: Ասես անապատի հրաշէկ աւաղով  
խանձուեց ու ծածկուեց Վրաստանի ծաղկազարդ, օրհնեալ բը-  
նութիւնը Լոեց երգն ու տաղը: Եկեղեցական զանգակների  
ձայնը սկսում է զրգուել գոռող ու յաղթանակող պետերին. կա-  
նանց բաց երեսները վիրաւորում են նրանց կեղծաւորութիւնը,  
այն կեղծաւորութիւնը, որ սէրը փոխանակել է հեշտանքի, ըն-  
տանիքը—հարեմի, հաւատի բոցավառ բռնկումներն ու ջերմա-  
ջերմ սէրն առ Աստուած—ֆանտիկոսութեան, անողոք ծի-  
սականութեան և ահուգողի անեղ Ալլահի առաջ: Սակայն իս-  
լամը ոչ լոկ զազրանք է ազդում վրացու պարզ ու պայծառ  
քնոյթքին—նրա մէջ կան և շատ վսեմ գծեր. նա հզօր է և ա-  
հեղ, նրա ալիքները, ըստ միջնադարեան վրացու հասկացողու-  
թեան, հեղեղել են համայն աշխարհը: Երուազէմը ու Բիւզան-  
դիոնը—քրիստոնէական այդ երկու սրբութիւններն արդէն նրա  
ձեռքումն են: Կովկասնեան լեռները—Վրաստանի հովիտների  
այդ հինաւուրց թշնամինները—նրա իշխանութեան ներքոյ են:  
Վրաստանը մի կղզեակ է ընկած ծովի մէջ. ծովը մոլեգնած կը-  
ռիւ է մղում նրա ափերի հետ և պատրաստ է ջրահեղձ անել  
նրան իր ալիքներով: Այդ ահուելի զօրութիւնը յուզում, բորբո-  
քում ու ապշութեան է հասցնում մարդկանց հարաւային երե-  
ւակայութիւնը, մարդկանց, որոնց բոլոր ոյժը կենտրոնացած  
է իր անձը ոչ թէ գիտակցօրէն, այլ բնազդով ճշմարտութեան  
նուիրելում: Ակաւում է դրժումն, հաւատուրացութիւն, սպա-  
սաւորումն յաղթական թշնամիններին, ստրկահոգութիւն, քըծ-  
նումն. վաճառքի է հանւում խիղճը, մոռացւում է այն ամենը,  
ինչ որ մի ժամանակ կեանքից էլ թանգ էր: Սակայն ժողովը-  
դի գիտակցութեան խորքում, ստրկացման ամենածանր շրջան-  
ներին անգամ, ապրում էր մի հաւատակը: Այդ հաւատամ-  
քէ մէջ էին կուլտուրայի այն նուիրական սկզբունքները, ո-  
րոնց Վրաստանը բնազդօրէն պահում-պահպանում էր իր ա-

բեան հեղեղների գնով, կարծես, գիտենալով, որ վաղ թէ ուշ  
 այդ սկզբունքներն անխզելի կապելու են ասիական մի փոք-  
 րիկ ժողովուրդ աշխարհի մեծ ազգերի հետ և այդ սկզբունքնե-  
 րի համար մղած կռիւը փոքրիկ ժողովրդին և տալու է սրբա-  
 զան և անկապտելի իրաւունք, որպէս համահաւասար, մտնելու  
 այդ մեծ ազգերի ընտանիքը: Այդ հաւատամքը՝ Խաչն էր—և նը-  
 րան պահպանեց գլխաւորապէս վրացի կինը, դարձեալ, կար-  
 ծես, հազարամարդար, բայց աւելի ճիշտը՝ լիովին գիտակցաբար  
 ըմբռնելով, որ այդ Խաչի մէջ է իր փրկութիւնն ու ազատու-  
 թիւնը: Վրացական կենցաղի բոլոր պատմիչներն ու հետազօ-  
 տողները միաբերան յիշտակում են վրացունու դերը և նշա-  
 կութիւնը: Վրաստանի լուսաւորութիւնը պահպանելու գործում:  
 Վրացի կանայք անգիր էին անում Սուրբ Գիրքը, աղօթքները,  
 վրաց հեղինակների բանաստեղծական երկերը: Նրանք համա-  
 րեա ամենքն էլ գրագէտ էին և նոյնն իրանց աղջիկերանցն  
 էին ուսուցանում: Տղաներին նրանք պատրաստում էին կռւե-  
 լու այն սրբազն հաւատամքի համար, որին ապաւինել էին  
 սրտի բոլոր ճգոտութերով ու ակնկալութիւններով, որի մէջ  
 ամփոփել էին իրանց ամբողջ յոյսը՝ ազատուելով մի օր հարե-  
 մական հարճի վիճակից, կազմելու այնպիսի ընտանիք, որի  
 մէջ պահող-պաշտպանող տարրը ինքը կինը լինէր, և ոչ ներ-  
 քինին, կինը՝ բաց դէմքով և ոչ թէ ծածկոցով, որը նրանց հա-  
 մար դագաղից էլ վատթար էր: Եւ ահա ջարդից յետոյ, իսլա-  
 մի լծի տակ, հաւատուրացների, ներքինիների, մեծ ու փոքր  
 բռնականների տիրացած աշխարհում, ահարեկուած ստրուկնե-  
 րի մթնոլորտում, անել կարօտութեան մէջ սկսում է վրացի  
 կնոջ ազգաշէն գործը: Կանանց մի մասը պատրաստում էր իր  
 զաւակներին ազատութեան յաղթական կռւի համար: Նա-  
 երգում էր նրանց հայրենիքի երկեր, պատմում էր նը-  
 րանց նախնիների քաջագործութիւններն ու հերոսական  
 մահը, օրէնում էր նրանց ու խաչակնքում—և այդ բոլորն  
 անում էր՝ ամեն բոպէ դէս ու դէն նայելով, ամեն շը-  
 շուկի ականջ գնելով, մահուան ու նահատակութեան վախը  
 միշտ աչքի դիմաց ունենալով: Նա երկիւղ էր կրում և  
 իր, և, որ գլխաւորն է, իր զաւակների համար, որոնք  
 բացի մոտվ ու արիմով մօտ լինելուց իրան, մօտ էին արդէն  
 և ոգով, և ամբողջ ապագայովի կանանց այդ մասը պատ-  
 րաստում էր մսրդիկ: Միւս կանայք պատրաստում էին  
 անցքեր. պատրաստում նոյն տեղականութեամբ, նոյն ըզ-  
 գուշութեամբ, ամեն բոպէ նոյն երկիւղն աչքի առաջ ունե-  
 նալով, որ իրանց բազմամեայ աշխատանքը, որպէս ու-

տայն, կարող է յանկարծ լոկ միայն ձեռքի մի կոշտ հպումից ոչնչանալ: Դրանց դերն աւելի դժուարին ու աւելի բարդ էր: Դրանք հարեմն ընկած կանայք էին, որոնք լաւ կերակրուող ու պարարուող թոչունի նման, նախապէս որոշուած էին ապրելու ու պահուելու՝ միայն օտարի պահանջներին բաւականութիւն տալու համար: Դրանք չունէին ոչ միայն որևէ իրաւունք, այլև—որևէ պարտականութիւն, բացի մի բանից, այն է՝ ծառայել իրանց տէրերի պազգուութեան ու տոփանքներին: Երբ, ինչպէս որ այդ յաճախ պատահում էր, այնպիսի կին էր ընկնում այդ աշխարհը, որ ներշնչուած էր լինուած մեր յիշած առաջին տիպի վրացի կանանց ձգուումներով ու հակումներով, այն ժամանակ այդպիսի կոսոց վիճակը սարսափելի էր: Ամբողջ հարեմը մի սոսկալի հակապատկեր էր ներկայացնուած նրա ներքին աշխարհին, և նրա մաքառումը պահանջում էր նրանից ոչ միայն արիութիւն ու անձնուրացութիւն, այլև բարոյական զիջումների մի ամբողջ շարք: Նպատակին հասնելու համար նրան վիճակւում էր հաշտուել իր անձի ստորացման, իր պատւի ու մաղկային արժանիքի անարգման հետ: Այդ ամենն, իհարկէ, անհետեանք չէր անցնում նրա հոգեորբարոյական պատկերի համար: Երրորդ տիպը ներկայացնում էին կին-նահատակիները: Եւ որանք անհամար քանակութիւն էին կազմում: Տեղեկութիւն կայ, որ 1226 թւին 50000-ից աւելի կանայք հաւատի համար նահատակուել են Խորասանի սուլթան Զաւալ-Էդդինի ձեռքով: Սրանք պատրաստում էին ժողովրդի ողին, ինչպէս որ առաջինները պատրաստում էին մարդիկ, իսկ միւսները— անցքեր:

Այդէս ուրեմն, մենք տեսնում ենք, որ Խաչի համար հղած վրացական բազմադարեան կուի ընդհանուր տիպը, որպէս կուլտուրայի նույիրական սկզբունքների մարմացած մի հաւատամք, մեղ ներկայանում է հետևեալ կերպով: մատնչող զինուրութիւնը ոչնչացրուած է ջարդի ժամանակ, շատերը փախել են, շատերն էլ վերջապէս անձնատուր եղել թշնամուն: Ժողովրդական ողին ընկել է: Այդ ժամանակ կինն է սկսում իր ստեղծագործական աշխատանքը և սիրով ու խնամքով, երկար ժամանակ կրում է իր մէջ ապագան, որպէս երեխային պրգանդում, համարելով իրան լոկ մի անօթ, որի մէջ պահուած է բարձր բարիք:

Սակայն, ինչպէս որ իր հայրենիքի համար կռւող տղամարդ-պաշտպանների դէմ իսլամն առաջ էր քաշում իր կարող ու քաջայալթ զինուրներին, որոնք չսայելով իրանց բոլոր մոայլ կողմերին, այնքան հրապուրիչ էին իրանց

ուժով ու մեծութեամբ, այնպէս էլ նա կանանց դէմ պատրաստեց հարեմում և, իբրև գիմաղիր ոյժ, առաջ մղեց իր կինարմատին՝ շատ նուազ իր մաքրութեամբ, բայց ոչ նուազ իր ոյժով: Նրա ոյժն, իրաւ է, միայն ժամանակաւոր յաղթութիւն կարող է տալ, քանի որ այդ ոյժը հոգեսր ոյժ չէ, այլ զուտ նիւթական: Բայց և այնպէս՝ դա հեշտանքի և գեղեցկութեան այն ոյժն է, որի հետ պատմութիւնը միայն իսլամականութեան մէջ չէ որ ստիպուած է եղել գործ ունենալ: Հարեմը մեքենայութիւնների և պազշուտութեան աղբիւր ծառայող կնոջ տիպը հասցեց ամենաբարձր զարգացման: Հարեմը կարողացաւ վարպետութեամբ, յաջորդաբար իր այդ ներկայացուցիչների մէջ սպառել անկենսունակ դարձնել համարեա այն բոլոր բարոյական բարձր սկզբունքները, որոնք դանդաղեցնում, կանգնեցնում էին մեքենայութիւնների ու ոճիրների ընթացքը, և փոխարէնը զինեց նրանց անխոցելի զօրութեամբ՝ իշխելու կեանքի ամբողջ զգայնական կողմի վրայ: Ինչպէս որ ստոր են միջոցները, այնպէս էլ ստոր են հարեմական կնոջ և նպատակները, և ձգտումները: Սակայն նրանց համեմու, նրանց իրականացնելու գործում հարեմի կինը ոչ պակաս հաստատակամ է և զինուած, քան բարձր կուլտուրային և բարձր բարոյական սկզբունքներին ծառայող կանայք: Եւ միանգամայն բընական է, որ կանացիական երկու կուլտուրաների բնազդական թշնամութիւնը հասնում է անհաշտելի ատելութեան, երբ անցքերի ընթացքը դէմ առ դէմ է բերում նրանց միւնոյն կուի դաշտում, ինչպէս որ այդ տեղի էր ունենում շարունակ Վրաստանի և իսլամի մէջ մղուած անվերջ կուռում:

Իմ պիեսում բնականաբար ինձ հետաքրքրեց այդ՝ դէմքերով, անցքերով և երանզներով այնքան հարուատ արևելքի աշխարհը: Եւ ցանկանալով ոյժերիս ներածին չափ ծանօթացնել ուսւ հասարակութիւնը վրաց ժողովրդի տիպիկական կողմերի և նրա պատմական վիճակի ընդհանուր բնաւորութեան հետ, ես չուզեցի իմ այդ փորձի մէջ կաշկանդուած լինել որևէ ճշշտիւ ու խստիւ որոշուած պատմական մումենտով: Դա անխուսափելի կերպով իր ժամանակաւոր, անցողական կնիքը կը դընէր և դէմքերի, և անցքերի վրայ—և ազատութիւն չէր տալ ինձ իր խիստ որոշականութեամբ: Դրա համար պիեսիս ֆաբուլան և գործող անձերի անսունները մտացածին են, էպոխը ճշտիւ չեմ որոշած, և այդ կողմից «Դաւաճանութիւն»-ը չէ յաւակնում պատմական ճշգրտութեան: Սակայն անցքերի իմաստն ու ճութիւնը պիեսում, գործող անձերի՝ որպէս ժողովրդի տիպիկական ու գաղափարական սկզբունքների արտա-

յայտիչների՝ բնաւորութիւններն ու հոգերանութիւնը, վերջապէս, Վրաստանի պատմութեան ընդհանուր ոգին—այդ ամենն ինձ համար առանձին հոգածութեան և ուշաջան մշակման առարկայ է եղել։ Առանց ինքս ինձանից ծածկելու պիեսի թերութիւնները ես այնուամենայնիւ կարծում եմ, որ ոչ մի բանում չեմ շեղուած ներքին պատմական ճշմարտութիւնից, որն, իմ կարծիքով, աւելի կարևոր է, քան արտաքին ժամանակագրական և փաստական ճշտութիւնը, այնպիսի աշխատութիւններում, որոնք չեն ձգտում գիտական նշանակութիւն ունենալու

---

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Սիւլէյման-խան, շահի դրանիկ գնդի հրամանատար և  
փոխարքայ Վրաստանում:

Զէյնար, 40 տարեկան, նրա գլխաւոր կինը, Վրաստանի  
թէյմուրազ թագաւորի այրին:

Ռուգայա, 25 տարեկան, Սիւլէյման-խանի ստրկոհին:  
Խսախար, Զէյնարի դայեակը, Անանիա Գլախայի կինը:  
Օթար-բէկ, Քարթալինայի կուսակալ, հաւատուրաց վը-  
րացի, 50 տարեկան:

Դայիանէ, նրա դուստրը, 18 տարեկան:

Անանիա Գլախա, գիւղացի, 70 տարեկան:

Էրէկէ, նրա հոգեգաւակը, 22 տարեկան:

Դաթօ, նրա որդին, 25 տարեկան:

Սարա, աստանդական՝ հոգեոր դասից, 50 տարեկան:

Հարա-Շատով, Թիֆլիսի քաղաքապետ:

Ալ-Ռազազաք, հարէշ, Սիւլէյման-խանի ներքինապետ:

Բեսօ, Օթար-բէկի ծառան, 45 տարեկան:

Մայկօ, Դայիանէի դայեակը:

Իրն-Շաաղ, պահակախմբի գլխաւոր, արաբ:

Գիզա, Վրացի գօրական:

Օրքելիան | Վրաց ազատ զօրքի առաջնորդներ:

Մմբատ | Մմբատ վորքի առաջնորդներ:

Սիւլէյման-խանի պահակախմումբ Վրաց զօրականներ: Սիւլէյ-  
ման-խանի հարճեր: Գիւղացիններ: Օթար-բէկի ծառաններ:

---

I գործողութիւն—Սիւլէյման-խանի ապարանքը Թիֆլիսում:

II և III գործողութիւն—Օթար-բէզի այգին, Գորիի մօ-

տերքում:

IV գործողութիւն—Կիրճ Թիֆլիսի մօտերքում:

V գործողութիւն—Սիւլէյման-խանի ապարանքը Թիֆլիսում:

Ամբողջ գործողութիւնը տեղի է ունենում միջին դարերի  
վերջերում, Վրաստանում, պարսկի ձեռքով կատարուած նուա-  
ճումներից մէկի ժամանակ:

Առաջին գործողութիւնից մինչև երկրորդն անցնում է  
հինգ օր:

Երկրորդը և երրորդը կատարւում են մի օրուգիշերում:

Երրորդից մինչև չորրորդն անցնում է հինգ օր:

Չորրորդը և հինգերորդը տեղի են ունենում մի գիշե-  
րուայ մէջ:

---

## ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Ստորայարկի պատշգամբ (terracas) Սիւէյման-խանի ապարանքում, ամբողք մէջ, Թիֆլիսում, Կուր գետի ափին: Ետև կետի ափին: Ետև կարազյըրը ներկայացնում է գետի միւս եղերքին գանուող քաղաքամասը, Մետեխի քարափեր՝ վերան ամրոց ու եկեղեցի: Պատշգամբը զետից անջատում է մի շաբք մարմարէ զունաւոր, ոլորսն սիներով, որոնք միացած են կամարներով և զարդարուած արարական զբերով ու արևելան բազմազյն նախշերով: Հորս կողմը վարդեր և պատառուկ բայսեր: Հանդիսականներից աջ ու ձախ պատերին սկինան քանդակներ արձնապակէ զարդանկարներ: Պատերում քանդակարդ դռներ: Բնմի մէջ տեղում—քառանկիվնի տապան, որը լցում է անկիններից չորս տոփունի երախներից թափուող անուշանոս ջրով: Աւազնից գէպի ձախ—լսյն զահոյք՝ վերան զորդիր ու բարձեր: Վաղամեսա զարուն է: Պայծառ վերջալոյսը զգալի արտգութեամբ տեղի է տալիս պայծառ լուսնեակ զիշերին:

Սիւէյման-խանը՝ շոր-շոր, բարձրահասակ մի ծներունի, թուկ գէմքով, սև միրուքով, որի մէջ հատ-հատ միայն երևում են ճերմտկ մասեր, երկան արքայական հազուատով՝ բազմած է զահոյքի վրայ: Դիմին բարձր, ճերմակ ապարօշ՝ զարդարուած ապամանվեայ փետուրով: Ենկիներին զբած է մէջքից կտպած սուրբ, որից կախուած են թլասիմներ, և որի վրայ երևում են Ալ-Զորանից առած զանազան մակազբութիւններ: Դահոյքի ետքը կանգնած են թիկնապահներ՝ սպասազն, զլաներին ապարօշներ: Դահոյքի ձախ կողմում—ներքինսպես Ալ-Ռազզը՝ հասալիկ հարէն, ճարպակալած երեսով և փոքրիկ, անհանգիսա աշքերով: Ոչ կողմում—Ղարա-նասուփը՝ յանցառ միքուրով, չոր-շոր, միջանասակ: Սիւէյմանի առաջ կանգնած է Օթար-բէկը՝ Դորիի էրիսթաւը, բարձրահասակ, լիք-լիք, յաղթակազմ, պարսկական հտպատառ, անմիրուք, ճերմակ բեղերով, որոնց ծայրերը հասնում են մինչև կուրծքը: Յօնքերը թաւ, երեսն տանական, բայց բաց ու պարզ և եղբեմն կննուուախ: Երիսին խորին վէրքի հնարք, որն անցնում է ճակատից մինչև այսի հէսր: Վըսն զէնք չկայ: Լուսում է Կուրի խուզ մռնչիւնը: Ալ նազաքը, Ղարա-նասուփը և Օթար-բէկը կանգնած են զլասկոր, աշքերը դեմքին յառած, հազուստների փեշերով ձեռքերը ծածկած: Սիւէյման-խանն անեղ, բայց յագնած, մեռելանման գերնած գէմով անշարժ նայում է գէպի վեր՝ ձեռքին փերուզէ թասրէ (աքրողորմնա) զցելով: Երկարատև լուսթիւն: Պալատականները հազիւ շունչ են քաշում:

### I

Սիւէյման-խան. Մեծ է Ալլահը:

Երեք պալատականներ. (Խոնարհուելով) Մեծ է Ալլահը:  
(Լոռութիւն):

Սիւէյման-խան. Փաղիշահը յանդիմանութիւններ է ուղարկում ինձ՝ Դիւրջըստանի պետիս: Դեռևս հեռուից է

խուլ դղրդումնրա զայրոյթի որոտը: Մենք ամենքս էլ նրա ոտքի փոշին ենք:

Երեք-պալատականներ. Թող նրա շուքը ծածկէ արարավխարհը:

Սիւլէյման-խան. Իմերէթի նենգամիտ թագաւորը՝ աղոտուած Ալիացիսայի փաշայի՝ այդ անիծեալ սիւննիի սպառնալիքներից՝ ծպտեալ մարդիկ է ուղարկում Քարթալինիա և զովու թարմութիւն է ներշնչում անհաւատ, շուն-քրստոնեանների սրտերին:

Օթար-բէկ. Թող աղուէսների և չաղալների ծարաւը յագեցնէ նրանց արիւնը:

Սիւլէյման-խան. Սուր է իմ աչքը և նուրբը է իմ ականնջը (աչքը դարձնում է Օթար-բէկին): Գորու էրիսթաւ \*), դռն ես իմ նեցուկը Քարթալինիայում: Քո լեզուն ականջ է շոյում, բայց քո սրտում դաւաճանութիւն կայ թագնուած:

Օթար-բէկ. Թող ես զոհ գնամ քո արդարութեան, ովտէր: Քո զայրոյթն ահեղ ու անսպասելի է ինձ համար, որպէս կայծակը պարզ ու պայծառ օրին: Իմ սիրտը մաքուր է քո դատաստանի առաջ:

Սիւլէյման-խան. Երբ դու երես դարձրիր խաւարից և ընդունեցիր իսլամի լոյսը, ես մոռացայ քո յանդուգն կոիւը իմ անյաղթելի զօրքի հետ: Ես մօտեցրի քեզ իմ գահին և քեզ՝ իմ ստրկին՝ յանձնեցի իշխանական զեկս Քարթալինիայում:

Օթար-բէկ. Ովկ փէյզամբարի սուր: Ինձ արժանացրած շնորհներիդ համար ես ոչնչացրի այս տաճարները, ուր մի ժամանակ ինքս էի աղօթուա: Ես խորտակեցի նախնիներիս շիրիմների կամարները, և այժմ գայլերն են ոռնում նրանց գերեզմանների վրայ: Միթէ ես ինայեցի իմ մերձաւոր կամ հեռուաւոր արիւնակիցներիս: Միթէ դու չէիր, որ ինձ ասում էիր — դռն ես, Օթար-բէկ, իմ հուրն ու սուրը: Միթէ այս ձեռքը չէ, որ ահա արդէն տասնեռութ տարի է քրիստոնէական հարամ արիւնով ներկում է Կուրի և Արագայի ջերը, և միթէ այդ արեան հետ քիչ եմ խառնել ես իմ եղայրների, հարազատների և բարեկամների արիւնը: Քար-քարի վրայ չժողնելով՝ ես փլատակ արի քսանուերեք եկեղեցի, գետնի հետ հաւասարեցրի տասնումէկ վանք և տէր-բարանների ու սևագլուխների և անարգուած մարմինները փայտէ խաչերից կապած՝ նետեցի գետը, որ լողան դէպի Կասպից ծովը: Փառք իրանին: Ես, ծննդովս վրացի, ոտքի առակ տուի Վրաստանը, որպէս որ-

\*) էրիսթաւ—դաւառի, շրջանի կուտակալ, կառավարիչ:

դին է ոտքի տակ տալիս իր անառակ մօրը, և նրան կապկը-պած ու հնազանդած՝ բերի, գցեցի քո ոտքերի տակ։ Եւ եթէ այդքանը դեռ բաւական չէ, եթէ այդ բոլորը հաճելի չէ քո յիշողութեան, ես—քո զո՞ն եմ։ Վերջ տուր կեանքիս, զօրա-մը արքայ (խոնարհում է նրա ոտքերի առաջ):

Սիւլէյման-խան։ (Խոտմ էր՝ բոլոր ժամանակ աչքերն անշարժ) Կախէթի էրիսթան աւելի հաւատարիմ է քեղանից։ Նա տասն ևերկու նզովուած երևանցիներ ողջ-ողջ թաղեց գետնի մէջ մինչև կոկորդը և եօթն օր, եօթը շնդ ու կրանկ օր թողեց նը-րանց այդպէս, որ ճանճերի և մժուկների կերակուր դառնան։ Նրանց վախլուկ, նապաստակ կտրած սրտերը չդիմացան այդ չարչարանքներին։ Նրանք բաց արին մեր առաջ երևանի սար-դարի դիտաւորութիւններն ու մեքենայութիւնները։ Նա իմ տակը փորում է Սպահանում։ Նա պարզեներ է ուղարկում փա-դիշահին և ամեն մի պարզեին մի-մի զրպարտութիւն կցում իմ մասին։ Իսկ ե՞ս ինչով արդարանամ։

Օթար-թէկ. (Ոտքի կանգնելով) Սրիդ զօրութեամբ, ով կա-բող արքայ։

Սիւլէյման-խան։ (Մտախոհ) Միայն սուրը չէ իշխող-ների զօրութիւնը։ Երկար է տեսում առիւծի գաղտագողի մօտե-նալը որսին, բայց երբ նա վրայ թուալ զոհին—թոփչքը պէտք է անշեղ և հաստատ մահաբեր լինի։ Քնացրն թշնամուկ և ապա յօշտոիր նրան։

Ղարա-հասութ. Հինաւուրց Սիւլէյման արքայի իմաս-տութիւնը փոշէ է մեր մեծափառ տիրոջ իմաստութեան առաջ։

Սիւլէյման խան։ Երևանի սարդարը հազար ու մի պար-գևներ է թափում փափիշահի գանի առաջ։ Նա ուղարկում է ոսկի ու արծաթ, Ղարաբաղի նժոյգներ, քարվաններով ըրինձ, մրգեղին ու ցորեն, ամրակազմ սարուկներ և գեղանի ստրկու-հիներ։ Նա փորսող է տալիս փափիշահի ոտքերի տակ և աշքը անկել է իմ Գիւրջաստանին։ Իսկ ուր էր այդ վախկոտ շունը, երբ ես սրանից քսան տարի առաջ, որպէս սպանիչ ժանտախտ, ոչնչացրի Վրաստանի քաջերին իրանց կանանցով ու երեխանե-րով։ Միթէ նա էր, որ Կախէթի և Թարթալինիայի իշխաննե-րին դարձրեց իրանի ստրուկներ, իսկ ազնւականներին և ժո-ղովուրդը—որսկան շների կերակուր։ Զէ որ ես էի Գիւրջըս-տանի արեւ խաւարեցնողը և այս ձեռքն էր, որ դուրս գջլեց նրա վերջին թագաւորի կրծքից նրա թրպրաող սիրտը (տան դուրս կամացով բացւում է դէպի պատշգամբ։ Դուան յետեւը կանգնած է Ձէյսարը՝ պարսկական նոխ հազուստով)։

Ղարա-Խառուֆ. Ո՞վ կարող է դիմա-  
ռըրել անյաղթիդ գօրութեան:  
Ալ-Խազաք. Դու ես Ալլահի մանդաղը, գրեթէ ամսնքը  
միասին:  
Օթար-բէկ. Թող կուրանան քո թըշ-  
նամիները:

Սիլէյման-խան. (Գուլքը խոնարհելով) Եւ ահա մարդուս  
փառքը: Ես այստեղ նստած եմ իմ գահի վրայ, իսկ թշնամի-  
ներս արդէն մոռացել են իմ ոյժը և օղակի պէս պատել են  
չորս կողմաւ:

Օթար-բէկ. Փորձիր իմ հաւատարմութիւնը, մեծագօր  
տէր: Ես կը զինեմ ամբողջ Քարթալինիան, գրոն կը տամ դէ-  
պի Քութայիս ու Ախալցխա, Իմերէթի թագաւորին և Ախալցը-  
խայի փաշային իրար կը կապեմ մի չուանով և խուրջինի  
պէս, էշի մէջը բարձած կը բերեմ, կը ձգեմ նրանց քո գրան  
շեմքին: Հրամայիր միայն—և ես կը յարձակուեմ երևանի վրայ.  
Ես սարդարի գլուխը կաշէ պարկի մէջ զցած՝ կ'ուղարկեմ  
քեզ:

Սիլէյման-խան. (Խոնարհելով նայելով նրան) Երբ կը գայ  
ժամանակ, ես կ'արձակեմ քո կապը: Իսկ այժմ գեռ վաղ է:  
Փաղիշահի հրամանով կը թռչի սարդարի գլուխը: Ղարա-Խւ-  
սնէֆ:

Ղարա-Խառուֆ. (Խոնարհելով) Հրամայիր, մեծագօր տէր:  
Սիլէյման-խան. Մի ստրկական նամակ շարադրիր՝ փա-  
ղիշահին ուղարկելու: Նամակը ինքդ կը տանհս պարզեների  
հետ միասին: Օթար-բէկ, այսօր գեռ կէս-գիշերը չհասած՝ դու-  
ճանապարհ կ'ընկնես Քարթալինիա: Տամնամէկ օր ժամանակ  
եմ տալիս քեզ: Այնտեղից կ'ուղարկեմ ինձ մի բեռն իստակ  
ուսկի, երեք բեռն արծաթ և տամնուերկու նժոյդ ձի: Առաջին  
նժոյդը պէտք է ճերմակ լինի որպէս ձիւն, և վերջինը—սև,  
որպէս գիշեր: Եւ սկսած առաջինից մինչև վերջինը՝ ամեն մէ-  
կը պէտք է այնքան ազնւարիւն լինի, որ կաշու տակից երևայ  
երակների ցանցը:

Օթար-բէկ. (Խոնարհելով) Ամենն էլ պատրաստ կը լինի  
լինը օրուայ մէջ:

Սիլէյման խան. Կ'ընտրես ամենասիրուն աղջիկներին,  
որ իմ կողմից պարզ ուղարկեմ փաղիշահին: Ես ինքը կը  
քննեմ նրանց գեղեցկութիւնը և վայ քեզ, թէ որ... Սպասիր...  
Ես լսել եմ, դու աղջիկ ունես:

Օթար-բէկ. (Յուգմունքը զսպելով՝ հանաքով) Քառասունից ա-  
ւելի, տէր իմ, շնորհիւ մարդարէի, որն աղատեց մեղ մի կին

ունենալու վիճակից. օրհնեալ լինի նրա անունը. Նրանցից լաւգոյներին ես կը ներկայացնեմ քո լուսափայլ աչքին:

## II

**Զէյնաբ.** (Դուռը բանալով եւ երեսի ծածկոցը յետ ճգիլով) **Oթար-բէկ,** չմոռանաս և **Գայիշանէին ուղարկելու:**

**Օթար-բէկ.** (Ցնցուելով՝ մի քայլ յետ է զնում եւ որպէսզի յուղմունքը թագնել կարողանայ, խորը զլուս է տալիս: Զէյնաշը մօտենում է Սիւէյման-խանի Թախտին, խոնարհում է, համբուրում է նրա ծնկները, ասպա վեր է կենում ու նատում նրա կողքին: Միեւնոյն դռնից դուրս է գալիս պառաւ Խսախարը եւ կանգնում է թմրի խորքում, սիւնի մօտ: Ղաքա-Խւուժիքը եւ Ալ-Ռազավը խոնարհում են Զէյնաբի առաջ):

Սիւէյման-խան. Ո՞ւմ մասին է խօսքը, Զէյնաբ:

**Զէյնաբ.** Ո՞վ Վրաստանի արեգակ. վաղուց անցել, գնացել է այն անիծեալ ժամանակը, երբ իմ աչքերը դեռ չէին տեսել ու ճանաչել քեզ, երբ իմ սիրալ դեռ չէին փռուած քո սուքի: Դու ես այժմ և՛ իմ հայրենիքը, և՛ իմ հաւատը, և՛ իմ տէրն ու տիրականը: Բայց երբ ես դեռ քոնը չէի—օ՛, անիծուի այդ սև օրերի յիշողութիւնը—երբ ես դեռ լծակից էի Գիւրջաստանի այն անարժան թագաւորին, այն ստոր ու ստահակ երկչոտին, որին քո կարող ձեռքը սպանեց, ես քաջ ճանաչում էի իմ խորամանկ ժողովրդին: Օ՛, ի զնւր չէր, որ ես այսքան տարիներ շարունակ աղերսում էի քեզ—մի՛ խնայիր նրանց արիւնը, ոտքի տակ տնւր, կիսճորիր նրանց: Միայն երկիւղն է ուղղում նրանց խարերայ սրտերը:

Սիւէյման-խան. (Ալեհարար) **Oթար-բէկ,** ի՞նչ են նշանակում թագուհու խօսքերը:

**Օթար-բէկ.** (Խրան կորցրած): Զդիտեմ, տէր իմ: Թագուհին զայրոյթի է արժանացնում իր հլու ծառային:

**Զէյնաբ.** (Արհամարհանքով) զայրոյթի արժանի է առիւծը, և ոչ աղուէսը: Տէր իմ, նա դեռ չկարողացաւ խարել քեզ և չի էլ կարող, քանի ես կենդանի եմ: Հեռուն թէ մօտիկ՝ ես գիտեմ ի՞նչ են պատրաստում քեզ համար: Ես չեմ թողնիլ, որ քեզ խարեն: Եւ քո ամբողջ պահակախումբը չէ կարող քեզ պահապանել այնպէս, ի՞նչպէս որ իմ սէրն է պահպանում: **Oթար-բէկ,** ուր է քո աղջիկը, որ դու ունեցար քո առաջին ամուսնութիւնից Մուխրանի բատոնի դստեր հետ, այն դստեր, որի յոր գորանքներով դու այնքան երկար կոիւ մղեցիր մեր անպարտելի սրի դէմ Ախալքալաքի լեռներում: Ո՞ւր է Մարիամից ծնուած աղջիկդ... (Նայում է երեսին սուր ու լարուած հայեացրով):

Թո քրիստոնեայ կին Մարիամից: Նա ընկաւ տիրոջս ձեռքից՝  
պաշտանելով քո ամրոցը, երբ դու Թութայիսում քարշ էիր  
գալիս Իմերէթի արքայադատեր ետևից և նրա դոդ հօր օգնու-  
թիմն էիր խնդրում անյաղթ Սիւլէյմանի դէմ պատերազմելու  
համար: Ո՞ւր է քո այդ աղջկը, Գայիշանէն: Ասա, որ մեռել է:

Օթար-բէկ. (Ձղաճարար բնելով իր հագուստի փեշերը, գու-  
նաթափ, աչքերը լայն չուծ, լուր է, խօսք ցի գոնում ասելու):

Զէյնաք. (Ազր չեռացնելով նրանից) Գունատուիր, գունատուիր,  
ստորաքարշ աղուէս: Գայիշանէն կենդանի է, ով Վրաստանի ա-  
րեգակ: Նա թագցրել է իր աղջկանն անմերձենալի անտառնե-  
րում, Ախալցխայի մօտերքում: Գայիշանէն աճել, ծաղկել է, որ-  
պէս լեռնային շուշան, և Օթար-բէկն հիանում է նրա վրայ՝  
գաղտուկ այցելելով նրան շարունակ: Ընդարձակ է հաւատու-  
րացի հարեմը,—ծ, եթէ նա սիրելիս վլնէր կանացի գեղեցկու-  
թիմը, այնպէս հեշտութեամբ ոտքի տակ չէր տալ այն ամե-  
նը, ինչին որ հաւատում էր,—բայց այդ հարեմում չկայ  
Գայիշանէն, և չկայ մէկը, որ հաւասար լինէր նրան իր  
գեղեցկութեամբ: Օթար-բէկ, քեզ համար պահիր քո բոլոր  
աղջիկներին, իսկ արքային բեր միայն Գայիշանէին (նեղ-  
նանքով նայում է Օթար-բէկին: Սա կանզած է գունաթափ: Ղարա-  
խւուժը եւ Ալ-Ռազարը զիշատիչ հայեացը են մեխած նրա վրայ:  
Սիւլէյման-խանը աչքերը չարագուշակ կոցած, իր ամբողջ դիրքով յի-  
շեցնում է վաղրին, որ պատրաստ է յարձակում գործել: Երկարատեւ  
լրութիւն ամն մէկն ապրում է իր զգացմունքով):

Սիւլէյման-խան. Օթար-բէկ, ի՞նչ կ'ասես:

Օթար-բէկ. (Խնքն իրան հաւաքած, միամտօքն եւ բարեսիրտ  
եղանակով) Եթէ այդ է միայն իմ մեղքը—ես անմեղ եմ: Գայիշա-  
նէին ես քեզ համար էի մեծացնում և ուզում էի բերել, դնել  
ոտքերիդ առաջ, իբրև մի լաւագոյն պարգև ծառայի կողմից:

Զէյնաք. (Ցնցուելով ապշած, ակամայից) Ի՞նչպէս, դու...  
(Խնքն իրան իշխելով) Վերջապէս:

Սուլէյման-խան. Բանի՞ տարեկան է նա:

Օթար-բէկ. Տասնութեց:

Զէյնաք. Տասնութը:

Օթար-բէկ. (Եփոթուելով) Շատ կարելի է, թագուհի: Ես  
իսկի իմ տարիքը չեմ յիշում, մեր մնաց որ մի երեխայ աղջկայ  
տարիքն յիշեմ: Բայց նա դեռ այնքան մատղաշ է երեւում, որ  
երկիւղ էի կրում քո զայրոյթը շարժել, զօրաւոր արքայ, այդ-  
պիսի մի անարժան պարգև բերելով քեզ:

Սիւլէյման-խան. Շատ խորամանկն ես, քարթալինացի:

Օթար-բէկ. Ո՞վ ամենատես և ամենագէտ. ի՞նչ է իմ խո-